

**Հայտարարություն լրագրողական կազմակերպությունների
համատեղ հայտարարությունը ԱԺ արտահերթ ընտրությունների
քարոզարշավի լուսաբանման և լրագրողների իրավունքների
խախտումների վերաբերյալ**

8 հունիսի, 2021թ., Երևան

Հունիսի 7-ին՝ ԱԺ արտահերթ ընտրությունների քարոզարշավի առաջին օրը, թիրախավորված ճնշում է գործադրվել «Yerkir.am» լրատվական կայքի թղթակից Լիա Սարգսյանի նկատմամբ: Էջմիածնում Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը մասնակցող քաղաքացիների մի խումբ խոչընդոտել է լրագրողի մասնագիտական գործունեությունը՝ վիրավորելով և սպառնալով նրան, քաշքշելով բարձրախոսը:

Այս դեպքը ՁԼՄ ներկայացուցիչների հանդեպ վերջին ամիսներին արձանագրված բազմաթիվ բռնությունների և ճնշումների շարունակությունն է: Հետհեղափոխական և հատկապես հետպատերազմյան շրջանում, երբ առավել ակտիվացավ լրատվամիջոցների բնեռացման գործընթացը, ինչպես քաղաքական ուժերը, այնպես էլ հասարակության տարբեր շերտեր, ելնելով իրենց գաղափարներից և նախասիրություններից, լրատվամիջոցներին և դրանց աշխատակիցներին ընկալում են կամ որպես յուրային, կամ՝ օտար: Իրենց հերթին ՁԼՄ-ների ճնշող մեծամասնությունը, սպասարկելով որևէ ուժի կամ գործչի շահերը, դարձել է քաղաքական գործընթացների անքակտելի մաս, իսկ լրագրողներն իրենց գործունեությամբ, այդ թվում նաև՝ սոցիալական ցանցերում, հաճախ իրականացնում են քաղաքական գործչին բնորոշ գործունեություն՝ անտեսելով մասնագիտական սկզբունքներն ու էթիկական նորմերը:

Մինևույն ժամանակ, ինչպես վերոնշյալ դեպքում, մենք ականատես ենք լինում նաև հակառակին, երբ լրագրողը հավատարիմ է մնում անաչառության և անկողմնակալության պահանջներին, չի ստեղծում արհեստական լարվածություն, իսկ կոնֆլիկտային իրավիճակներում դրսևորում է արժանապատիվ կեցվածք: Այսպիսի պահվածքն առավել քան կարևոր է այս ծայրահեղ լարված նախընտրական քարոզարշավի շրջանում:

Վերահաստատում ենք, որ ծանր ժամանակներ ապրող երկրի ապագայով մտահոգված քաղաքական գործիչները և նրանց համակիրները, ընտրություններին մասնակցող ցանկացած ոք պետք է զսպվածություն, հանդուրժողականություն ու քաղաքակիրթ բանավեճ ծավալելու ունակություն դրսևորի, իսկ լրատվամիջոցները նպաստեն այդպիսի մթնոլորտի ձևավորմանը:

Ելնելով վերոգրյալից՝ կոչ ենք անում.

- Ընտրություններին մասնակցող կուսակցություններին և դաշինքներին՝ հանդես գալ աջակիցներին ուղղված հրապարակային պահանջով՝ զերծ մնալ կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծելուց և լրագրողների նկատմամբ ճնշումներ գործադրելուց, անկախ նրանից, թե ինչ լրատվամիջոց են ներկայացնում,
- ԶԼՄ-ների ղեկավարներին՝ նախընտրական միջոցառումների լուսաբանումը կազմակերպելիս հաշվի առնել հնարավոր բարդություններն ու դրանց հետևանքները և հրահանգավորել աշխատակիցներին՝ գործելու բացառապես մասնագիտական սկզբունքներին համապատասխան,
- Լրագրողներին և օպերատորներին՝ նախընտրական միջոցառումները լուսաբանելիս խուսափել սեփական նախաձեռնությամբ վիճաբանություններ սադրելուց, տարբեր ուժերի ներկայացուցիչների և նրանց համակիրների հետ քաղաքական բանավեճերի մեջ մտնելուց, իրականացնել քարոզարշավի անկողմնակալ լուսաբանման գործառույթներ,
- Իրավապահներին՝ առավել զգոնություն ցուցաբերել և կանխարգելել ցանկացած բռնություն կամ այլ տեսակի ճնշում նախընտրական միջոցառումները լուսաբանող ԶԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ, ապահովել վերջիններիս անվտանգությունը և անկաշկանդ գործունեությունը՝ բացառելով ընտրովի կամ խտրական վերաբերմունքը:

Մենք շարունակելու ենք հետևել իրադարձություններին, արձանագրելու ենք լրագրողների ու լրատվամիջոցների իրավունքների բոլոր խախտումները և քարոզարշավի վերջում հանդես ենք գալու ամփոփ հայտարարությամբ:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՄՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ
ԻՆՖՈՐՄԱՅԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ
ԳՈՐԻՄԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
«ՖԵՄԻԴԱ» ՀԿ